

Կաստարենք «Քենդլի» իրագործմանը

«Քենդլ» ծրագրին հույսի կեսերին «Երկիր»-ն ակորդային էր՝ սիստեմային արարագացուցի կառուցումը վերականգնելու էր որոշ մարդկանց անձնակազմի քիզնեսի շահերի պարճատով: Ուրախալի է, որ մեր հրատարակմանը արձագանքեցին ինչպես տարբեր լրատվամիջոցներ, այնպես էլ իշխանության որոշ օղակներ: «Քենդլ» ծրագրին ու ծագած խնդրին առավել մանրամասն ծանոթանալու նպատակով կենտրոն այցելեց նաև ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, ՆՅԴ Կայսարական ԳՄ ևերկայացուցիչ Արմեն ՌՌՄՍՍՄՅԱՆԸ:

Լ. ԳԱՍՏՅԱՆ

Որպես կոալիցիայի կողմ ՆՅԴ-ն մտադիր է խնդիրը քննարկման առարկա դարձնել Կառավարությունում, ԱԺ-ում, եւ այդ նպատակով այն ներկայումս համակողմանի ուսումնասիրվում է:



«Նաև որպես ֆիզիկոս տեղում ծանոթանալով ծրագրին՝ աներկբա կարող եմ ասել, որ այն անմիջապես է: Դրա իրականացմանը մեր երկիրը կարող է դառնալ համաշխարհային գիտական կենտրոն: Այսինքն՝ այն, ինչի մասին մենք այսքան տարի խոսում ենք, իրականություն դարձնելու եզակի հնարավորություն է ստեղծվել, եւ այդ հնարավորությունը չպետք է բաց թողնել»,- ասաց Արմեն Ռուստամյանը: Նրա խոսքով՝ անձնակազմի սխալ կլինի խնդրի անստեղծումը եւ ծրագրի տապալումը. մի խոսքով բարձրակարգ հայ գիտնականներ իրոք գնահատանքի արժանի գործ են կատարել եւ հասել մեծ

հաջողության՝ միջազգային ասպարեզում բարձրացնելով ոչ միայն իրենց, այլև Հայաստանի վարկը:

Բայց ներկայումս ծրագրի շուրջ բարձրացված անհանգստության պիտի ավելի է նետել մի քանի հարց: Առաջին՝ արդյոք հնարավոր է մեր գործող արագացուցիչի հենքի վրա իրականացնել նման ծրագիր, եւ դրա գոյության պարագայում նոր արագացուցիչ ունենալը ավելորդ շռայլություն չէ: «Միանշանակ՝ ոչ: Մաշռայություն լինել չի կարող, որովհետեւ կառուցվելիք սինքրոտրոնային արագացուցիչը բոլորովին նոր սերնդի ապարատ է, որը նորայր է անգամ աշխարհում: Այն լայն դաշտ է բացում 10-ից ավելի ոլորտներում գիտական հետազոտությունների եւ դրանց գործնական կիրառության համար: Բացառված էր նաև, որ այս ծրագիրն իրականացվի եղած արագացուցիչի հենքի վրա, քանի որ սա որակապես նոր բան է»,- ասաց Ա. Ռուստամյանը:

Երկրորդ՝ արժե՞, արդյոք, որ Կառավարությունը հատուկ ուշադրություն դարձնի ծրագրին՝ այն գնահատելով որպես առաջնային, եւ, հետևաբար, տրամադրվի անհրաժեշտ տարածքը, այլ կերպ օժանդակվի ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահը դրական է պատասխանում նաև այս հարցին: «Արտաքին բաղադրականության մեջ մենք շեշտադրում ենք

նաև ինտելեկտուալ, գիտական տարածաշրջանային կենտրոն դառնալու Հայաստանի հնարավորությունն ու ներուժը եւ այդ առումով մեր ունեցած ծրագրերը: Այլընտրանք չունենք, ու այս իմաստով էլ շատերն այսօր բերես «Քենդլ» ծրագիրն ամբողջ խորությամբ չեն պատկերացնում եւ հասկանում, բայց այն իրական լուրջ խթան կարող է դառնալ մեր երկրում գիտության նոր բաժնով գարգացման, գիտական առկա ներուժի արդյունավետ օգտագործման եւ անգամ աշխարհով մեկ ցրված մեր գիտնականների հայրենիք վերադարձնելու համար»,- մեկնաբանեց Ա. Ռուստամյանը:

Երրորդ՝ ծրագիրը պետք է իրականացվի ամերիկյան 50 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհի միջոցով եւ այդ առումով էլ հարց է բարձրացվում, քե այդ ծախսումն արդյոք արդարացվա՞ծ կլինի: Ի պատասխան՝ Ա. Ռուստամյանը նկատեց, որ «տարբեր ծրագրերով Հայաստանը մինչ այժմ շատ օգնություններ է ստացել, բայց հարց է, քե այդ օգնությունները որքանո՞վ են արդյունավետ օգտագործվել: Ընդհանրապես, վարկերի, դրամաշնորհների օգտագործման արդյունավետության առումով լուրջ խնդիրներ ունենք: Սակայն սա այն եզակի դեպքն է, երբ ծրագրի իրագործման դեպքում արդյունավետության ապահովումը կապված չի հարուցում: Երկրորդ կարծիք լինել չի կարող, քանի որ ստացված այդ գումարներն իրենց արդարացնելու են բազմապատիկ շահույթ բերելով»:

Ի վերջո, Ա. Ռուստամյանը վստահեցրեց, որ որպես կոալիցիայի կողմ ՀՅԴ-ն մտադիր է խնդիրը քննարկման առարկա դարձնել Կառավարությունում, ԱԺ-ում, եւ այդ նպատակով այն ներկայումս համակողմանի ուսումնասիրվում է: «Մտադիր ենք հարցը ներկայացնել նաև ՀՀ նախագահին եւ գիտնականներին ցուցաբերել բաղադրական այն լուրջ աջակցությունը, որի կարիքը նրանք այսօր ունեն, եւ որն անհրաժեշտ է նաև ծրագրի իրագործման համար»,- ասաց ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչը: